ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/34

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ՝ Ռ. Եգանյանի, Պ. Գաբրելյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 21.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել դադարեցնել «ԳՀԱՊՁԲ-2019/16-16-

ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի թիվ 2 արձանագրությամբ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերության և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության կոնսորցիումի հայտը մերժելու և մերժված չափաբաժնի մասով «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությանը 1-ին տեղը զբաղեցնող ճանաչելու մասին 07.05.2019թ.-ի որոշման 3.1, 3.3, 3.4 կետերը և 6.1 կետի ենթակետերը՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերության մասով:

Բողոքներ քննող անձի 21.05.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 27.05.2019թ.-ին և 10.06.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 10.06.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.06.2019թ.-ին:

1. <u>«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Բողոքաբերը բողոքով հայտնել է հետևյալը.

«Համաձայն «ԳՀԱՊՁԲ-2019/16 16-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2019թ-ի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.4 ենթակետի՛ վերոնշյալ հանձնաժողովը որոշել է մերժել «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊԸ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի, 40-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով:

Վերլուծելով մերժման հիմք հանդիսացող օրենքի դրույթները գտնում եմ, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ՛

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է.

Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանվում է.

էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք

պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում. կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է.

Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ելնելով «ԳՀԱՊՁԲ-2019/16-16 ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2019թ. թիվ 2 արձանագրությամբ մերժման հիմք հանդիսացող Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի պարտադիր պահանջ հանդիսացող «…Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում…» պայմաններից հայտնում ենք, որ «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊԸ և «Թեստինգ

Սոյուշնզ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից գնանշման հարցմանն մասնակցելիս ներկայացված փաստաթղթերը կազմված են եղել ինչպես օրենքով սահմանված կարգով, այնպես էլ կառավարության՝ վերոնշյալ որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Դրա ապացույց է հանդիսանում այն, որ «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից գնանշման հարցմանը մասնակցելիս ներկայացված փաստաթղթերում արտապված էլեկտրոնային թվային ստորագրությունները տեսանելի են և պարզ երևացող, ինչ վերաբերվում է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում հավաստագրի զետեղված լինելուն, ապա հայտնում եմ, որ «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային ստորագրությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում սահմանվում է, որ «...նույնականացման քարտում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը տրվում է նույնականացման քարտի վավերականության ժամկետով», որի մասին է վկայում մեր ընկերության դիմումին ի պատասխան <էկենգ> ՓԲԸ-ի կողմից 05.05.2019թ-ի թիվ 0132h գրությունը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով որ, «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊԸ և «Թեստինգ Սոցուշնզ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը բավարարում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի, 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներին, հետևաբար «ԳՀԱՊՅԲ-2019/16-16 ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2019թ. թիվ 2 Արձանագրության՝ 3-րդ կետի 3.4 ենթակետում նշված մերժման հիմքերը բացակայում են, ուստի խնդրում եմ չեղարկել սույն արձանագրությամբ «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊԸ և «Թեսգլինգ Սույուշնզ» ՍՊԸ կոնսորցիումի վերաբերյալ կայացված մերժման որոշումը:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ հայտ ներկայացրած «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն, համաձայն ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքում առկա տվյալների, հանդիսանում է ԱԱՀ վճարող, իսկ գնանշման մասին հայտարարության 5-րդ հավելվածում սահմանված է, որ «Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով ՀՀ պետական բյուջե վճարվեիք ԱԱՀ-ի գումարը նշվում է 4-րդ սյունակում», սակայն «Ար. Մեդտեխնի կա» ՍՊԸ-ի կողմից 4-րդ սյունակում նշված է «0», ուստի, ելնելով վերոգրյաւից, «Ար. Մեդտեխնի կա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ենթակա է մերժման:»:

Ընկերությունը Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած դիրքորոշմանը ներկայացնելով առարկություններ, հայտնել է հետևյալը.

««ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի առնչությամբ Պատվիրատուի ներկայացրած դիրքորոշումը անհիմն եւ խիստ սուբյեկտիվ կարծիք է, իրավական եւ փաստական հիմքերի սուբյեկտիվ գնահատմամբ:

Ընկերության բողոքի իրավական եւ փաստական հիմքերի Պատվիրատուի մեկնաբանությունների եւ եզրույթների վերաբերյալ ներկայացնում ենք հետեւյալ առարկությունները.

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տվյալների էլեկտրոնային պահոց՝ նույնականացման քարտի տեխնիկական կառուցվածքային մաս, որը ներառում է քաղաքացու՝ սույն օրենքով նախատեսված տվյալները, տվյալների պաշտպանվածությունն ապահովող՝ քարտին հատուկ անհատական կրիպտոգրաֆիկ բանալիներ, էլեկտրոնային թվային ստորագրության եւ նույնականացման համար հավաստագրեր, էլեկտրոնային փոստ:

Նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված է՝ նույնականացման քարտի բովանդակությունը, ձեւը, տրամադրելու (փոխանակելու) կարգը եւ ժամկետները, տրամադրելու (փոխանակելու) մերժման հիմքերը, որի 4-րդ մասի համաձայն՝ Նույնականացման քարտը ներառում է տեխնիկական մաս՝ տվյալների էլեկտրոնային պահոց, որտեղ ամրագրվում են սույն հոդվածի 2-3-րդ մասերով նախատեսված տվյալները, տվյալների պաշտպանվածությունն ապահովող՝ քարտին հատուկ անհատական կրիպտոգրաֆիկ բանալի, էլեկտրոնային թվային ստորագրության համար հավաստագիր եւ էլեկտրոնային փոստ:

«Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, համաձայն որի՝

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների եւ տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված եւ էլեկտրոնային թվային ձեւով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ եւ օգտագործվում է

ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալներ՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն ստորագրող անձն օգտագործում է իր էլեկտրոնային թվային ստորագրությունը յուրաքանչյուր անգամ կիրառելիս.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների եւ միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր՝ փաստաթուղթ՝ թղթի, էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա, որը հաստատում է ստորագրող անձին էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների եւ էլեկտրոնային թվային ստորագրության պատկանելիությունը եւ ծառայում է էլեկտրոնային թվային ստորագրության իսկության ստուգման միջոց.

Կառավարության 04.05.2011թ 526 որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ «….Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, ….»

Պատվիրատուի պատճառաբանությունն այն, որ ընկերության տնօրենի էլեկտրոնային ստորագրությունը չի ներառում հավաստագիր կամ անվավեր է չի հիմնավորվում որեւէ իրավական կարգավորմամբ, քանի որ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի եւ «Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ նորմերի պարզ ուսումնասիրությունից արձանագրում ենք, որ ստորագրության հավաստագիրը մի քանի բաղադրատարերի միաժամանակյա առկայությունն է, որ իրավասու մարմնի էլեկտրոնային պահոցում հավաքագրելու միջոցով անձին տրամադրվում է էլեկտրոնային ստորագրություն եւ

էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը հաստատում է ստորագրող անձին էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների եւ էլեկտրոնային թվային ստորագրության պատկանելիությունը եւ ծառայում է էլեկտրոնային թվային ստորագրության իսկության ստուգման միջոց:

Պատվիրատուի այն պատճառաբանությունը, որ առկա չէ էլեկտրոնային հավաստագիրը կամ ստորագրությունը վավեր չէ, չունի որեւէ իրավական կոնտեքստ, այլ ներկայացվել է բառերի տարաբնույթ ձեւակերպմամբ միտք, որն ավելի բնորոշ է բառախաղի:

Եթե ընկերության տնօրենի ստորագրությունը հավաստագիր չունենար առհասարակ չէր կարող ստորագրել փաստաթուղթը, հավաստագրի բացակայության դեպքում Հ.Հարությունյանի տվյալները գեներացված չէին լինի համակարգում եւ այդ դեպքում չէր ունենա էլեկտրոնային ստորագրություն, քանի որ ինչպես նկատեցինք հավաստագիրը դա անձի նույնականացման համար սահմանված մի քանի տեղեկությունների միաժամանակյա առկայությունն է, որը էլեկտրոնային պահոցում հավաքագրելով հավաստում է անձի ստորագրությունը, դրա իսկությունը եւ պատկանելիությունը:

Տնօրենի ստորագրության հավաստագրի վավերականության մասին գրությամբ հայտնել է նաեւ «Էկենգ» ՓԲ ընկերությունը, որ Հ. Հարությունյանի էլեկտրոնային ստորագրության հավաստագիրը վավեր է, իսկ մեկ այլ գրությամբ հայտնել է, որ 03 մայիսի 2019 թվականին էլեկտրոնային ստորագրությունը պարզապես ակտիվ չի եղել:

Էլեկտրոնային ստորագրության ակտիվ չլինելը որոշ ժամանակահատվածում աղերս չունի ստորագրության հավաստագրի վավերականության հետ:

Կառավարության 04.05.2011թ 526 որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջը վերաբերում է էլեկտրոնային ստորագրության հավաստագրի վավեր լինելուն:

«Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության եւ դրա ստուգման տվյալների պատկանելիությունը ստորագրող անձին հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրով, որը տրամադրում է հավաստագրման կենտրոնը:

Հավաստագիրը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները՝

ա) հավաստագրի եզակի գրանցման համարը՝ ըստ տվյալ կենտրոնի.

բ) անձի անունը, ազգանունը կամ նրա կեղծանունը (մտացածին անունը).

գ) էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

դ) էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի տրման օրը, ամիսը, տարեթիվը, իսկ եթե էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրն ունի գործողության ժամկետ, ապա նաեւ այդ ժամկետը.

ե) էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնի անվանումը, գործունեության իրականացման հասցեն եւ իրավաբանական անձի գտնվելու վայրը:

Նույն օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը կարող է ունենալ գործողության ժամկետ: Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի գործողության ժամկետը լրանալու պահից հետո տվյալ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը չեն համարվում էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված:

Նույնականացման քարտում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը տրվում է նույնականացման քարտի վավերականության ժամկետով:

Հ. Հարությունյանի նույնականացման քարտի վավերականության ժամկետը 25.04.2027 թվականն է, հետեւաբար՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը վավեր է նույն ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար եւ մերժվում են:

Վերոգրյալ իրավական նորմերի համատեքստում վերլուծելով սույն գործով փաստական հանգամանքները եւ ներկայացված փաստաթղթերը արձանագրում ենք, որ առկա չէ հայտը մերժելու այն հիմքը, որը նկատի է ունեցել պատվիրատուն:

Անդրադառնալով պատվիրատուի դիրքորոշմանն այն փաստարկի վերաբերյալ, որ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությունը հանդիսանալով ԱԱՀ վճարող, գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ-ի, որն ըստ գնահատող հանձնաժողովի իրավաչափ է եւ գնահատել է, որ համապատասխանում է օրենքով, կարգով եւ հրավերով սահմանված պահանջներին, ապա խիստ սուբյեկտիվ եւ շահագրգիռ վերաբերմունք է դրսեւորել տվյալ ընկերության նկատմամբ:

Ինչպես բողոքով արդեն ներկայացրել ենք, որ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությունը հանդիսանում է ԱԱՀ վճարող, եւ հրավերի 5-րդ գլխի 5.2 կետով սահմանված է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի եւ կանխատեսվող շահույթի հանրագումարը) եւ ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձեւով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք

կամ այլ մանրամասներ չեն պահանջվում եւ ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

5.3 կետը սահմանում է, եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով եւ համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որեւէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաեւ մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Հրավերի հավելված 5-ը սահմանում է գնային առաջարկը, համաձայն որի, եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Այսպիսով գնահատող հանձնաժողովը թիվ 2 արձանագրության 3.1 կետով «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերության հայտը գնահատել է, որ համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, մինչդեռ՝ հրավերի վերոգրյալ պահանջների ուսումնասիրությունից արձանագրում ենք, որ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերության ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, եւ գնահատող հանջնաժողովը պետք է մերժեր նրա ներկայացրած հայտը:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել դադարեցնել «ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի թիվ 2 արձանագրությամբ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերության և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության կոնսորցիումի հայտը մերժելու և մերժված չափաբաժնի մասով «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությանը 1-ին տեղը զբաղեցնող ճանաչելու մասին 07.05.2019թ-ի որոշման 3.1, 3.3, 3.4 կետերը և 6.1 կետի ենթակետերը՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերության մասով:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.05.2019թ. գրությամբ դիմել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն դիրքորոշմանը կից ներկայացնելով բողոքի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերի պատճենները, հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով ներկայացված բողոքը, գտնում ենք որ այն անհիմն է, հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները՝

1. ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ, հայտերի բացում՝ 03.05.2019թ.:

2. ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնման առարկա են հանդիսանում՝

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	*Սարքածրագրային հավաքածու՝ մարդու մարմնի եռաչափ պատկերի հետ հետ վիրտուալ աշխատանքի համար, ինտերակտիվ անատոմիական սեղան, կարճ*
2	*Մարդու անատոմիայի ուսուցման անհրաժեշտ ֆանտոմների և մոդելների լրակազմ*

3. ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները ըստ չափաբաժինների ՝

/հ	*Մասնակիցների անվանումները*	*Մասնակիցների կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝*

		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին թիվ 1				
	<<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ	45800000	0	45800000
	<<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիում	29556666.67	5911333.33	35468000
Չափաբաժին թիվ 2				
	<<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ	42400000	0	42400000
	<<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ	22000000	4400000	26400000
	<<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիում	28316666.67	5663333.33	33980000

4. ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ընթացքում www.ekeng.am ինտերնետային կայքի Adobe Acrobat Reader DC էլեկտրոնային ստորագրության հավաստագրի վավերականության ստուգման ծրագրի միջոցով իրականացվել է հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների էլեկտրոնային ստորագրության հավաստագրի վավերականության ճշտում: Ճշտման արդյունքում արձանագրվել է որ <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում տեսանելի է էլեկտրոնային թվային ստորագրություն, սակայն հավաստագիրը զեղեղված չէ <<Նույնականացման քարտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Ծրագրի կողմից արձանագրված տեղեկատվությունը վերստուգելու նպատակով, ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջարկությամբ,

համալսարանը հիմք ընդունելով նաև գնումների կազմակերպման կարգը հաստատող ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 67-րդ կետը՝ 06.05.2019թ. գրավոր դիմել է <<էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ>> ՓԲ ընկերությանը: Գրության ի պատասխան սույն թվականի մայիսի 06-ին «էկենգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է պատասխան գրություն, որում մասնավորապես նշվում է՝

Ի պատասխան Ձեր՝ ս.թ. մայիսի 6-ի թիվ 09/522 գրության հայտնում ենք, որ գրությանը կից ներկայացված փաստաթղթերը չեն պարունակում վավեր էլեկտրոնային ստորագրություն:

Փաստաթղթերը ստորագրված են Հարություն Հարությունյանի (ՀԾՀ 1907890610) կողմից, ով 2019թ. մայիսի 3-ի դրությամբ չի ունեցել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող ակտիվ էլեկտրոնային ստորագրություն:

/պատասխան գրության պատճենը կցվում է/

5. <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկի տեսանելի սակայն անվավեր էլեկտրոնային թվային ստորագրության ամսաթիվ՝ 03.05.2019թ.:

6. ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2019թ. նիստի արձանագրության թիվ 3.4 որոշմամբ <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտը մերժվել է: Նույն նիստի արձանագրության թիվ 5.1 որոշմամբ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել 1-ին չափաբաժնի մասով՝ <<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊ, 2-րդ չափաբաժնի մասով՝ <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲ ընկերությունները:

7. <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտ մերժման իրավական հիմքերը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնումների կազմակերպման կարգը հաստատող ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝

էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային

եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերա Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.19 կետի համաձայն՝

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Գնումների կազմակերպման կարգը հաստատող ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 67-րդ կետի համաձայն՝

Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Գնումների կազմակերպման կարգը հաստատող ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝

Հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.2 կետի համաձայն՝

Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Գնումների կազմակերպման կարգը հաստատող ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի, ինչպես նաև ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.9 համաձայն՝

Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է

գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից <<էյջ Ջի էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտը մերժվել է հիմք ընդունելով վերոնշյալ օրենսդրական հղումները:

Մասնակցի հայտը գնահատվել է հրավերով սահմանված կարգով: Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի զետեղված լինելու պահանջը հանդիսանում է հրավերով սահմանված պահանջ: <<էյջ Ջի էյջ Քոմփանի>> ՍՊԸ-ի հայտը պարունակում է գնային առաջարկ, որը 03.05.2019թ. դրությամբ հաստատված է տեսանելի սակայն անվավեր՝ ուժ չունեցող էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի իրավական ուժ չունենալու և անվավեր լինելու իրավական փաստերը ներկայացված են սույն դիրքորոշմանը կից: Հայտի գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, և չի հանդիսանում շտկման ենթակա փաստաթուղթ: Մասնակցի կողմից ներկայացրած տվյալների իսկությունը ստուգված է իրավասու մարմինների գրավոր եզրակացության ստանալու եղանակով:

Ինչ վերաբերվում է <<էյջ Ջի էյջ Քոմփանի>> ՍՊԸ-ի բողոքով նշված «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային ստորագրությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված «.....նույնականացման քարտում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը տրվում է նույնականացման քարտի վավերականության ժամկետով» դրույթին, ինչպես նաև «Էկենգ» ՓԲԸ տնօրեն Լ.Ավետիսյանի կողմից տրամադրված տեղեկատվությանը, հայտնում եմ Ձեզ, որ դրանք ոչ մի կերպ չեն կարող հանդիսանալ <<էյջ Ջի էյջ Քոմփանի>> ՍՊԸ-ի հայտով ներկայացրած գնային առաջարկում տեսանելի էլեկտրոնային ստորագրության 03.05.2019թ. դրությամբ հավաստագերի զետեղված լինելու ապացույց, քանի որ հակառակը արդեն իսկ հիմնավորված է: Բողոքով ներկայացրած թե «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային ստորագրությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված «.....նույնականացման քարտում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը տրվում է նույնականացման քարտի վավերականության ժամկետով» դրույթով և թե «Էկենգ» ՓԲԸ-ի 15.05.2019թ. տրված գրությամբ չի ֆիքսվում 03.05.2019թ. դրությամբ նշված էլեկտրոնային ստորագրության վավեր լինելու հանգամանքը: Բողոքին կից չի ներկայացվել նաև <<էյջ Ջի

Էյջ Քոմփանի>> ՍՊԸ-ի կողմից «Էկենգ» ՓԲ ընկերությանը սույն թվականի մայիսի 15-ին ներկայացրած դիմումի պատճենը, հարցի բուն բովանդակությանը ծանոթանալու համար: Ամենայն հավանականությամբ, անվավեր էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված հայտ ներկայացրած մասնակիցը՝ <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ-ն, վերջինիս հայտը մերժելու որոշումը և մերժման հիմնավորումները ստանալուց հետո իրականացրել է հավաստագրերի զետեղման գործընթացը, որը ուժի մեջ է մտել այդ պահից, և որի վաղեմության ժամկետը չի կարող գերազանցել նույնականացման քարտի վաղեմության ժամկետը, այն է՝ 25.04.2027թ.:

8. Բողոքի երկրորդ մասով «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի հայտը մերժելու ներկայացրած պահանջը նույնպես համարում ենք անհիմն, հաշվի առնելով հետևյալ հիմնավորումները:

ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման հրավերի 5-րդ հավելվածում սահմանված է «եթե մասնակիցը ԱԱՀ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվում է 4-րդ սյունյակում», ինչը և մասնակցի կողմից նշվել է՝ 0:

ԱԱՀ վճարող մասնակիցները 4-րդ սյունյակով սահմանված գումարային արտահայտությունը նշում են ելնելով գնման առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման և /կամ/ վաճառքի ԱԱՀ առկայության հանգամանքից, ելնելով համապատասխան ապրանքի համապատասխան մաքսային կոդերից, ինչը դուրս է գնումների ոլորտը կարգավորող օրենսդրական կարգավորումներից, և չի հանդիսանում հրավերի պահանջ: 4-րդ սյունյակով սահմանված գումարային արտահայտության սխալ լրացման ռիսկը կրում է տնտեսվարող սուբեկտը հարկային ոլորտում:

Բացի այդ գնումների կազմակերպման կարգը հաստատող ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝

Մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝ գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:»:

Հաշվի առնելով վերոգրյալը, Բողոքներ քննող անձին խնդրել են «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների, մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի հետ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), 07.05.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 3.3-րդ կետի համաձայն՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների (համատեղ գործունեության պայմանագիր) կողմից հայտում ներառված բոլոր ներկայացված փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը չեն պարունակում վավեր էլեկտրոնային թվային ստորագրություն:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Հանձնաժողովը որոշել է մերժել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների (համատեղ գործունեության պայմանագիր) հայտը:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

«ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ընթացքում www.ekeng.am ինտերնետային կայքի Adobe Acrobat Reader DC էլեկտրոնային ստորագրության հավաստագրի վավերականության ստուգման ծրագրի միջոցով իրականացվել է հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների էլեկտրոնային ստորագրության հավաստագրի վավերականության ճշտում: Ճշտման արդյունքում արձանագրվել է որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում տեսանելի է էլեկտրոնային թվային ստորագրություն, սակայն հավաստագիրը զետեղված չէ «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Ծրագրի կողմից արձանագրված տեղեկատվությունը վերստուգելու նպատակով, ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

առաջարկությամբ, համալսարանը հիմք ընդունելով նաև գնումների կազմակերպման կարգը հաստատող ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 67-րդ կետը՝ 06.05.2019թ. գրավոր դիմել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲ ընկերությանը:

Գրության ի պատասխան սույն թվականի մայիսի 06-ին «Էկենգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է պատասխան գրություն, համաձայն որի՝ ի պատասխան Ձեր՝ ս.թ. մայիսի 6-ի թիվ 09/522 գրության հայտնում ենք, որ գրությանը կից ներկայացված փաստաթղթերը չեն պարունակում վավեր էլեկտրոնային ստորագրություն:

Փաստաթղթերը ստորագրված են Հարություն Հարությունյանի (ՀԾՀ 1907890610) կողմից, ով 2019թ. մայիսի 3-ի դրությամբ չի ունեցել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող ակտիվ էլեկտրոնային ստորագրություն:

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկի տեսանելի, սակայն, անվավեր էլեկտրոնային թվային ստորագրության ամսաթիվ՝ 03.05.2019թ.:

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում բացակայում է ավելացված արժեքի հարկի հաշվարկը՝ գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսված չէ այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքում առկա տվյալների համաձայն՝ հայտ ներկայացրած «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն հանդիսանում է ԱԱՀ վճարող:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ ... էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.19 կետով սահմանված են Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընդ որում գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ կառավարության 01.03.2018թ. N 285-Ն որոշմամբ հաստատված «նույնականացման քարտում զետեղվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկումից բացի այլ տեսակի նյութական կրիչներում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկման և տրամադրման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ հավաստագրման կենտրոն կամ «ԷԿԵՆԳ»), որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

Նույն կարգի արդեն 3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի տրամադրման նախապայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կացության քարտի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված նույնականացման քարտի, հանրային ծառայության համարանիշի կամ վերջինս չստանալու վերաբերյալ տեղեկանքի, ինչպես նաև թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարի կատարման մասին անդորրագրի ներկայացումը:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ կանոնադրության 7-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության խնդիրներն են մինչև կենտրոնացված հավաստագրման կենտրոնի ստեղծումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, իրավաբանական անձանց և պետական

մարմիններին էլեկտրոնային ստորագրության հավաստագրման ծառայությունների տրամադրումը:

Վերոնշյալ նորմերի դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ էլեկտրոնային թվային ստորագրության օգտագործումը թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով: Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ, որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի հետ) տնօրենը չի ունեցել օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային թվային ստորագրության վավեր հավաստագիր, որի բացակայության պայմաններում ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթը պետք է դիտարկել ոչ պատշաճ, հիմք ընդունելով «Էկենգ» ՓԲԸ կողմից տրված տեղեկատվությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնային առաջարկը «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի, որպես ՀՀ ռեզիդենտ կազմակերպության, տնօրենի կողմից ստորագրվել է անվավեր հավաստագրով, ուստի չի կարող համարվել պատշաճ ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթ, իսկ որի՝ գնային առաջարկի ստորագրության բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա էր մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ինչ վերաբերում է թիվ «ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի՝ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշմանը, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն իրավաչափ չէ և ելնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության սկզբունքներից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ

հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը, հանգում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում … հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Վերը նշված նորմի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսելով այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Այն դեպքում, երբ ԱԱՀ վճարող մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվում է առանց ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, ապա հայտը պետք է գնահատվի անբավարար և մերժվի:

Ընդ որում, գործադիրը, սահմանելով բացառություն, հստակեցրել է, որ մասնակցի հայտն ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Անփոփելով վերը նշվածները, Բողոքներ քննող անձը փաստում է, որ բոլոր այլ թերությունների առկայության դեպքերում, որոնք թվարկված չեն նշված բացառություններում, ներկայացված հայտերը պետք է գնահատվեն անբավարար ու մերժվեն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից, որպես ԱԱՀ վճարողի, հայտով ներկայացված գնային առաջարկը պետք է ներկայացվեր արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով՝ գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսելով այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիսի առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումն իրավաչափ չէ և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Հատկապես այն դեպքում, երբ Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետի հիման վրա հանձնաժողովն է գնահատում ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը, հարկ է համարում նաև հավելել, որ բողոքի քննության ընթացքում Պատվիրատուի կողմից չներկայացվեց որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց առ այն, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով իրականացվել է «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի գնային առաջարկի հիմնավորվածության գնահատում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ.

2. Պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը՝ 1-ին չափաբաժնի մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**